ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՐԳԵՒ

ՄԱՏԹԵՎՈՍ ԵՎ ՂՈՒԿԱՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փրկութուն, շնորհ, օրհնություն, առաջնորդություն, ուրախություն, ազատագրում և խաղաղության:

1. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ – SALVATION (ԶԱՔԱՐԻԱ)

ՂՈՒԿԱՍ 1:67–69, 1:76–77

67 Եվ նորա հայրը՝ Զաքարիան Սուրբ Հոգով լցվեց, մարգարէացավ և ասեց. 68 Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստվածը, որ այցելության եկավ, և փրկություն արավ իր ժողովրդի համար: 69 Եւ փրկության եղջյուր վերկացրեց մեզ համար իր Դավիթ ծառայի տանը:

76 Եւ դու, երեխա, Բարձրեալի մարգարէ կ'կոչուվես. որովհետև կ'գնաս Տիրոջ երեսի առաջից նորա ճանապարհները պատրաստելու, 77 Որ նորա ժողովրդին տաս փրկության գիտությունը իրենց մեղքերի թողութեան մէջ, 78 Մեր Աստուծո գթած ողորմության համար, որով ծագող արեգակը վերևից այցելեց մեզ.

- ***Ինչպես է Աստված փրկել քեզ այստեղ, այս երկրի վրա (ինքնախաբեությունից, վախից, անհանգստությունից և տարբեր այլ բաներից):***

2. ՇՆՈՐՀ – FAVOR (ՄԱՐԻԱՄ)

ՂՈՒԿ. 1:26-30

26 Եւ վեցերորդ ամսում Գաբրիէլ հրեշտակն Աստծու կողմից ուղարկուեց Գալիլեայի մի քաղաք, որի անունը Նազարէթ էր, 27 Մի կույսի մօտ, որ նշանված էր մի մարդու, որի անունը Հովսէփ էր՝ Դավիթի տանից. և այն կույսի անունը Մարիամ էր: 28 Եւ հրեշտակը նորա մօտ գալով ասեց. Ողջույն քեզ, ով շնորհընկալ (Եփես. 1:6 Իր փառավոր շնորհքի գովասանքի համար. որ նորանով շնորհք ցույց տվեց մեզ այն Սիրելիով)- Տէրը քեզ հետ. օրհնեալ ես դու կանանց մէջ: 29 Եւ նա նորան տեսնելով շփոթվեց նորա խօսքի համար, և իր մտքում մտածում էր, թէ ի՞նչպիսի բան պիտի լինի այս ողջույնը: 30 Եւ հրեշտակը ասեց նորան. Մի վախեցիր, Մարիամ. Որովհետև Աստուածանից (շնորհք x159) գտար:

- ***Բարեհաճություն խոսքը ավելի հաճախ թարգմանվում է որպես շնորհ:***

3. ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ – BLESSED (ԵՂԻՍԱԲԵԹ)

ՂՈՒԿ. 1:39-45

39 Մարիամն այն օրերում վերկացավ՝ շտապելով լեռնակողմը գնաց՝ Հուդայի քաղաքը. 40 Եւ Զաքարիայի տունը մտավ, և Եղիսաբեթին բարևեց: 41 Եւ եղավ, երբոր Եղիսաբեթը Մարիամի բարևը լսեց, երեխան նորա որովայնում խաղաց. և Եղիսաբեթը Սուրբ Հոգիով լցվեց: 42 Եւ մեծ ձայնով աղաղակեց և ասեց. Օրհնեալ ես դու կանանց մէջ. և օրհնեալ է քո որովայնի պտուղը. 43 Եւ սա որտեղի՞ց է ինձ, որ իմ Տիրոջ մայրն ինձ մօտ եկավ: 44 Որովհետև ահա, երբոր քո բարևի ձայնն իմ ականջներին հասավ, երեխան որովայնումս ուրախանալով խաղաց: 45 Եւ երանի նորան, որ հավատաց, թէ այն բաները կ'կատարվեն, որ Տէրից իրեն ասված են:

- ***Դու օրհնյալ ես որովհետև – Անեծքն ազդեցություն չունի: Ծննդոց 3***

4. ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ – GUIDANCE (ՅՈՎՍԷՓ)
ՄԱՏ. 2:13,19-23

13 Եւ երբոր նորանք այն տեղից գնացին, ահա Տիրոջ հրեշտակն երևեց երազում Հովսէփին և ասեց. Վեր կաց՝ վեր առ երեխային և նորա մօրը, և փախիր Եգիպտոս, և մնա այնտեղ, մինչև որ ասեմ քեզ. որովհետև Հերովդէսը որոնելու է երեխային որ կորցնէ նորան: (2 տարի անց. Հովսեփը «ամուսին» սպասել է 2 տարի Տիրոջից առաջնորդվելու համար:)

19 Եւ երբոր Հերովդէսը մեռավ, ահա Տիրոջ հրեշտակն երազում երևաց Հովսէփին Եգիպտոսում, 20 Եւ ասեց. Վեր կաց՝ վեր առ երեխային և նորա մօրը և գնա Իսրայէլի երկիրը. որովհետև երեխայի կյանքը որոնողները մեռել են: 21 Եւ նա վեր կացավ՝ վեր առավ երեխային և նորա մօրը և եկավ Իսրայէլի երկիրը: 22 Եւ լսելով թէ Արքեղայոսն է թագաւորում Հրէաստանի վրա իր հայր Հերովդէսի տեղ, վախեցավ գնալ այնտեղ, և երազում պատգամ առնելով՝ գնաց Գալիլեայի կողմերը. 23 Եւ եկավ բնակվեց այն քաղաքում որ Նազարէթ է ասվում. որ կատարուի մարգարէների ձեռով ասուածը թէ՝ Նազովրեցի կկոչուի:

- *Հիսուսը եկավ, որպէսզի մենք ամեն օր առաջնորդություն ունենանք:*
  Նա խոսում է մեզ հետ երազների միջոցով , Իր Խոսքի միջոցով, առաջնորդում և ուղղություն է տալիս մեզ իր Սուրբ Հոգով:

5. ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ – JOY (ՅՈՎԻՎՆԵՐ)
ՂՈՒԿ. 2:8-10

8 Եւ այն տեղ հովիվներ կային դաշտում բնակվող, որ գիշերն իրենց հօտերը պահում էին: 9 Եւ ահա Տիրոջ հրեշտակը կանգնեց նորանց առաջին, և Տիրոջ փառքը նորանց շուրջը ծագեց. և մեծ վախով վախեցան: 10 Եւ հրեշտակն ասեց նորանց. Մի վախեցեք, որովհետև ահա մեծ ուրախություն եմ ավետում ձեզ, որ բոլոր ժողովրդին պիտի լինի.

- *Ուրախությունը հիմնված չէ մեր հանգամանքներից: Մենք դժվարություններ կունենանք:*

  «Քրիստոնյաները միակ մարդիկ են, ովքեր կարող են իսկապես տխրության մեջ լինել և միևնույն ժամանակ ուրախանալ: Թե՛ վիշտը և թե՛ ուրախությունը, կարևոր զգացմունքներ են, որ մարդն արտահայտում է:

  Ինչպե՞ս կարող ենք փորձել ուրախ լինել վշտի պահին: (Պողոսը բանտում)

6. ԱԶԱՏԱԳՐՈՒՄ – REDEMPTION (ԱՆՆԱ)
ՂՈՒԿ. 2:36-38

36 Եւ այնտեղ էր Աննա մարգարէուհին՝ Փանուէլի աղջիկն՝ Ասերի ցեղից. սա տարիքով շատ առաջացած էր և ամուսնու հետ միայն եօթը տարի էր ապրել՝ սկսած իր կուսութիւնից. 37 Եւ ութսուն և չորս տարվա չափ որբևայրի էր (Աննան 105 տարեկան էր), որ տաճարից չէր հեռանում. ծոմերով և աղօթքներով գիշեր ու ցերեկ ծառայում էր

Աստուծուն: 38 Սա էլ նույն ժամին վերկացավ՝ Տէրից գոհանում էր և խօսում էր մանկան մասին այն ամենին որ Երուսաղէմի մէջ փրկութեան (redemption) սպասում էին:

- *Մեր տարիքը, հոգսերը, մասնագիտությունը, նույնիսկ մեղքը սահմանափակում չի դնում Աստծո առաջ:*

7. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ – PEACE (ՍԻՄԷՕՆ)

ՂՈՒԿ 2:25–29, 2:33–35

25 Եւ ահա Երուսաղէմում մի մարդ կար, որի անունը Սիմէօն էր, և այս մարդը արդար և աստուածավախ էր, և սպասում էր Իսրայէլի մխիթարութեանը, և Սուրբ Հոգի կար նորա վերա: 26 Եւ նորան պատգամ էր եղած Սուրբ Հոգուց, որ մահ չի տեսնի, մինչև որ Տիրոջ Քրիստոսին (Մէսիա) կ'տեսնէ: 27 Եւ Հոգով առաջնորդված եկավ տաճար, և երբոր ծնողները Հիսուս երեխային բերին, որ օրէնքի սովորութեան պէս նորա վրա կատարեն, 28 Նա էլ առավ նորան ընդունեց իր գիրկը, և Աստուծուն օրհնեց, և ասեց. 29 Հիմա արձակում ես քո ծառային, ով Տէր, քո խօսքի պէս խաղաղութեամբ. 30 Որովհետև իմ աչքերը տեսան քո փրկութեանը, 31 Որ պատրաստեցիր ամեն ժողովուրդների առաջին: 32 Լույս՝ հեթանոսներին լուսավորելու, և փառք՝ քո Իսրայէլ ժողովրդի համար: 33 Եւ Հովսէփը և նորա մայրը զարմացել էին այն բաների վրա, որ նորա համար խօսվում էին: 34 Եւ Սիմէօնն օրհնեց նորանց, և նորա մայր Մարիամին ասեց, «Ահա՛ սա նա է, որ պատճառ է դառնալու Իսրայէլի մէջ շատերի անկման ու բարձրացման և նշան՝ հակառակութեան: 35 Իսկ քո անձի միջով էլ սուր պիտի անցնի, որպէսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան»:

- *Թեև մենք բոլորս մեղք գործեցինք, սակայն խաղաղություն ունենք Աստուծո հետ Հիսուսի Քրիստոսի միջոցով:*

Ամփոփում

Ի՞նչ է Սուրբ Հոգին ասում ինձ այս պատգամի միջոցով:

Այս Սուրբ Ծննդյան առթիվ Աստված ուզում է Ձեզ պարգևել. փրկություն, շնորհ, օրհնություն, առաջնորդություն, ուրախություն, ազատագրում և խաղաղության: